



## ԳՊՀ բարերար Ժիրայր Նիշանյանի 80-ամյա հոբելյանին նվիրված Գավառի պետական համալսարանի ամենամյա 19-րդ գիտաժողովի նյութերին ներկայացվող պահանջները

### 1. Գիտաժողովն անցկացվելու է ըստ գիտության հետևյալ բնագավառների.

- ✓ Ֆիզիկամաթեմատիկական գիտություններ
- ✓ Քիմիական գիտություններ
- ✓ Կենսաբանական գիտություններ
- ✓ Տեխնիկական գիտություններ
- ✓ Էկոլոգիական գիտություններ
- ✓ Գյուղատնտեսական գիտություններ
- ✓ Պատմական գիտություններ
- ✓ Տնտեսական գիտություններ
- ✓ Փիլիսոփայական գիտություններ
- ✓ Բանասիրական գիտություններ
- ✓ Իրավաբանական գիտություններ
- ✓ Մանկավարժական գիտություններ
- ✓ Հոգեբանական գիտություններ
- ✓ Սոցիոլոգիական և քաղաքական գիտություններ
- ✓ Աշխարհագրություն, երկրաբանություն և երկրաբնապահպանություն

### 2. Հոդվածների ներկայացվող տեխնիկական պահանջներն են՝

Գիտաժողովի նյութերի հրապարակման համար խնդրում ենք մինչև ս/թ դեկտեմբերի 4-ը Գավառի պետական համալսարան ներկայացնել գիտական հոդված՝ 5-ից 10 էջի սահմաններում, հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով երկու օրինակից, համակարգչային շարվածքով B 5 (17սմ x 24սմ) չափի տպագրական թղթի վրա, GHEA Grapalat տառատեսակով, 1,12 միջտողային հեռավորությամբ, թղթի բոլոր կողմերից 18 մմ լուսանցքով), էջադրումը՝ էջի ներքևում (footer), կողմնորոշումը՝ կենտրոն, սահմանները 1սմ: Վերևում նշել վերնագիրը՝ 10,5 տառաչափով (մեծատառերով, **Bold**): Վերնագրից մեկ տող ներքև՝ աջ անկյունում, նշել հեղինակ(ներ)ի անվան, հայրանվան սկզբնատառերը և ազգանունը (**Bold**), գիտական աստիճանը և կոչումը (սկսել մեծատառով, նոր տողից), զբաղեցրած պաշտոնը (սկսել մեծատառով նոր տողից), բաց թողնելով երկու տող՝ շարադրել աշխատանքը՝ վերջում նշելով նաև բանալի բառերը, օգտագործված գրականության ցանկը, գրականության հղումները: Լատիներեն և հունարեն տառերը, սիմվոլները, ինչպես նաև բանաձևերը հավաքել Microsoft Equation Editor 3.0 ծրագրով, նկարների բացատրությունները և աղյուսակները (ներկայացնել նկարի տեսքով)՝ 10 տառաչափով, ինչպես նաև հոդվածի շարադրանքի լեզվից տարբեր վերը նշված երկու լեզուներով՝ հոդվածի վերնագիրը, ամփոփագիրը, հեղինակ(ներ)ի անվան, հայրանվան սկզբնատառերը և ազգանունը, գիտական աստիճանը և կոչումը, զբաղեցրած պաշտոնը:

Նրանք, ովքեր չեն հանդիսանում բուհի աշխատակիցներ հոդվածների տպագրման համար պետք է վճարեն սահմանված գումար՝ հոդվածի յուրաքանչյուր էջի համար 1.800 (հազար ութ հարյուր) ՀՀ դրամի չափով, փոխանցումն իրականացնել ցանկացած բանկից ՎՏԲ Հայաստան բանկ ՓԲԸ Կամո մ/ն 16021100146800

հաշվեհամարով: Չափորոշիչներին չհամապատասխանող զեկույցները չեն ընդունվելու:  
Ձեկուցումները ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով:  
*Կից անհրաժեշտ է ներկայացնել համապատասխան ամբիոնի երաշխավորությունը, կարծիք  
առաջարկվող հոդվածի մասին:*

Գավառի պետական համալսարան,  
ք. Գավառ, Չրանտ Չակոբյան 1,  
հեռ. (0-60) 46-04-03, (0-264) 2-57-75  
E- mail: info@gsu.am